ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 29 2026 № 1

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ARCHAEOLOGY

ՀՏԴ՝ 069.44
DOI: 10.52971/18294316-2026.29.1-16

ԱՆՎԱՎՈՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Մարիամ Սարիբեկյան
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Բենիկ Վ. Վարդանյան
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Ամփոփում
Նախաբան. Մ.թ.ա. 3500-2500/2400 թթ. Հայաստանում և Հարավային Կովկասում տարածված վաղբրոնզիդարի Կուր-արաքսյան մշակույթի շրջանակներում սև փայլեցված բազմազան կավե առարկաների կողքին ի հայտ են գալիս անիվի և սայլի թափքի կավե մոդելներ, կենդանակերպ արձանիկներ: Վերջիններիս բացառիկ են, և դրանց գործառույթը շատ երկար ժամանակ քննարկման առարկա է մասնագիտական շրջանակներում: *Մեթոդներ և նյութեր.* 2020թ.-ից Հայաստանի պատմության թանգարանի զետեղարանում պահվող Հառիճի վաղբրոնզիդարյան բնակատեղիի հնագիտական գտածոների նորովի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թանգարանում առկա են 330 կենդանակերպ արձանիկ, սայլի թափքի 9 և անիվների 133 մոդել: Այս առարկաները վերականգնվել, չափագրվել և ուսումնասիրվել են Կուր-արաքսյան նմանատիպ առարկաների համատեքստում: *Վերլուծություն.* Քանի որ վերոնշյալ առարկաների պեղումների ընթացքում հուշարձանից գտնվել է նաև մեկ ամբողջական սայլի մոդել, կարևոր է քննարկել այս առարկաների փոխկապակցվածությունը և ծագումը Հայաստանում և Հարավային Կովկասում՝ որպես անվավոր փոխադրամիջոցների մոդելների առաջին օրինակներ: *Արդյունքներ*. Սույն աշխատանքում ներկայացվում են տարածաշրջանում անվավոր փոխադրամիջոցների մոդելների առաջին օրինակները, քննարկվում դրանց ձևերը և գործառույթը:

Բանալի բառեր՝ *Անվավոր փոխադրամիջոցներ, անիվի մոդելներ, արձանիկներ, Շիրակ, Հառիճ, վաղբրոնզիդար, Կուր-արաքսյան մշակույթ։*
Ինչպես հղել՝ Սարիբեկյան Մ., Վարդանյան Բ. *Անվավոր փոխադրամիջոցների մոդելներ ծագումը Հայաստանում և Հարավային Կովկասում և դրանց գործառույթը* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի։ 2026։ Հ. 1(29)։ 16-27 էջեր։ DOI: 10.52971/18294316-2026.29.1-16

THE APPEARANCE OF WHEELED VEHICLE MODELS IN THE SOUTH CAUCASUS AND THEIR FUNCTIONS

Mariam Saribekyan
Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Benik V. Vardanyan
Shirak Center for Armenological Studies of NAS, Yerevan, RA

Abstract
Introduction: Between 3500–2500/2400 BC, during the Early Bronze Age, specifically within the so-called Kura-Araxes culture of Armenia and the broader South Caucasus, clay wheel-and-cart models and animal figurines begin to appear alongside the characteristic, black-polished pottery of this culture. Previously, such objects were not widespread. The discovery of these artifacts in large quantities is exceptional, and their function has long been a subject of discussion among archaeologists. *Methods and Materials:* A recent study of finds from the Early Bronze Age settlement of Harich, stored in the History Museum of Armenia since 2020, revealed a collection of 330 animal figurines, 9 wheeled vehicle models, and 133 wheel models. These objects were restored, re-measured, and analyzed in comparison with similar Kura-Araxes artifacts from other South Caucasian sites. *Analysis:* Since one complete wheeled vehicle model was also found during excavations at Harich, it is essential to examine the interrelationships among these objects and their emergence in the South Caucasus as the earliest examples of wheeled vehicles. *Results:* This study presents the earliest known wheeled vehicle models in the region and discusses their forms and possible functions.
Key words: *Wheeled vehicles, wheel models, figurines, Shirak, Harich, Early Bronze Age, Kur-Araxes culture.*
Citation: Saribekyan M., Vardanyan B. *Appearance of wheeled vehicle models in Armenia and the South Caucasus and their function* // "Scientific Works" SHCAS of NAS RA. Vol. 1(29). Gyumri. 2026, 16-27 pp. DOI: 10.52971/18294316-2026.29.1-16

ՆԱԽԱԲԱՆ. Հառիճի հնագիտական հուշարձանը գտնվում է Շիրակի մարզում՝ Գյումրուց 22 կմ հարավ-արևելք՝ Արագած լեռան հյուսիսային լանջերին։ Հուշարձանն ուսումնասիրվել է 20-րդ դարի սկզբից։ Այն բազմաշերտ, ընդարձակ բնակատեղի և դամբանադաշտ է, որտեղ պեղվել են վաղբրոնզիդարյան բնակատեղի, միջին և ուշ բրոնզ-երկաթի դարերով թվագրվող 119 դամբան, միջնադարյան բնակատեղի և եկեղեցի։ Հուշարձանը զբաղեցնում է մոտ 6 հա տարածք [2, էջեր 59-60]։

Հառիճի հնավայրը մշտապես եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում և առանցքային նշանակություն է ունեցել տարածաշրջանի բրոնզիդարյան հնագի-

տության համար։ Հուշարձանի ուսումնասիրության գործում հատկապես կարևոր են հնագետ Տելեմակ Խաչատրյանի կատարած աշխատանքները՝ կապված հնավայրի բրոնզ-երկաթիդարյան մշակութային շերտերի բացահայտման և առաջին հետազոտությունների հետ [42]։

Պեղումների ընթացքում՝ 1966-1972 թվականներին, Տ. Խաչատրյանի կողմից պեղվել են վաղբրոնզիդարյան բնակատեղին և բրոնզ-երկաթիդարյան դամբանադաշտը։ Հուշարձանի պեղումներից հայտնաբերված հնագիտական առարկաներն այժմ պահվում են Հայաստանի պատմության թանգարանում (այսուհետև՝ ՀՊԹ) և «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանություն ծառայություն» ՊՈԱԿ-ում։

2020 թվականից հուշարձանի նյութերի նորովի ուսումնասիրության արդյունքում նոր տասնյակ առարկաներ են ի հայտ եկել, որոնք նախկինում չեն արժանացել հետազոտողների ուսումնասիրությանը, իսկ 2022 թ.-ից՝ ՀՊԹ-ում պահվող Հառիճի վաղբրոնզիդարյան բնակատեղիից գտնված հարյուրավոր առարկաներ՝ հատկապես մանրաքանդակի օրինակները վերականգնվել և ամրակայվել են, թվայնացվել, լուսագծանկարահանվել։ Այս առարկաների մեջ հատկապես իրենց քանակով և բազմազանությամբ առանձնանում են կենդանակերպ արձանիկները, սայլի թափքերի և անիվի մոդելները։ Անդրադառնանք դրանց առանձին-առանձին։

Անիվի մոդելներ

Հառիճի հնավայրից հայտնաբերված քննվող իրերը, ի տարբերություն այլ վաղբրոնզիդարյան հուշարձանների, մեծ թիվ են կազմում։ Անիվների մոդելները 155 օրինակ են, որոնցից 133-ը կավից, 22-ը՝ քարից, ընդ որում, հանդիպում են նաև տուֆից պատրաստված օրինակներ (Նկ. 1)։ Այս անիվների մեջ հանդիպում են 3-4 սմ-ից 10-12 սմ տրամագծով օրինակներ, սակայն ճնշող մեծամասնությունը միջին չափերի են՝ 4-6 սմ տրամագծով՝ ժամանակաշրջանի կավե իրերին բնորոշ դեղին և շագանակագույն տարբեր երանգավորումներով։

Կուր-արաքսյան բնակատեղիներում հանդիպում են 2 տեսակի անվաձև առարկաներ, որոնց տարբերակիչ գլխավոր հատկանիշը չափերն են։ Այս առարկաների մեծամասնությունը 4-7 սմ տրամագիծ ունեցող իրեր են, որոնք նմանակում են անվավոր փոխադրամիջոցների անիվների ձևերին։ Նմանատիպ անիվների օրինակներ հայտնի են վաղբրոնզիդարյան հուշարձաններում, օրինակ՝ Քեթիում [41, էջ 25], Շենգավիթում [35, էջ 28։ 52-53], Մուրաթ-Հույուքում (Թուրքիա) [32, էջեր 116-117]։ Քարե անվաձև առարկաները քիչ քանակությամբ են հայտնաբերվում և հետազոտողների կողմից հիմնականում դիտարկվել են կա՛մ իլիկի գլուխներ, կա՛մ հաշվիչ քարեր (*թոքեններ*)[6]։

Արձանիկներ

Հառիճի վաղբրոնզիդարյան բնակատեղիից թերևս ուշադրության արժանի ամենակարևորները 347 կենդանակերպ և մարդակերպ արձանիկներն են։ Սրանցից 330-ը կենդանակերպ են՝ փոքրաչափ արձանիկներ, որ պատկերում են խոշոր և մանր եղջերավոր կենդանիների՝ կարճ ոտքերով, երբեմն դուրս ցցված դնչով ու հստակ ոճավորված եղջյուրներով։ Ձեռնածեփ, մանրահատիկ կավից, հիմնականում անխառն կավե շաղախից պատ-

բաստված այս իրերի մեջ հազվադեպ հանդիպում են շատ մանր ավազաքարեր կամ բուսական մնացորդներ: Արձանիկներն ունեն տարբեր գունավորումներ՝ բաց դարչնագույնից մինչև մուգ սև: Չունեն արտահայտված նախշեր, գծազարդեր կամ դրոշմներ, սակայն երբեմն դրանց վրա նշմարվում են մատնահետքեր կամ գործիքների կիրառման հետքեր: Այս արձանիկների մեջ կան նաև դուրս ցցված սապատներ, փոր, քիթ, բերան և ականջներ ունեցողներ: Գերակշռում են խոշոր և մանր եղջերավոր անասունների՝ ցուլերի, ոչխարների և խոյերի արձանիկները, սակայն երբեմն կարելի է հանդիպել նաև շան, արջի, ձիու պատկերներով օրինակների: Ըստ չափերի՝ այս արձանիկները նույնպես 2-7/10 սմ են և համապատասխանում են սայլի թափքերի մոդելների չափերին, ուստի դրանք կարող են մեկնաբանվել որպես սայլի մոդելի մաս [27, էջ 28] (Նկ. 2):

Նմանատիպ կենդանակերպ արձանիկներ հայտնի են տարածաշրջանի մի շարք նորքարիդարյան հուշարձաններից [15, 16, 29, 33], որոնց թիվը հասնում է մի քանի տասնյակի, իսկ Հառիճի վաղբրոնզիդարյան հնավայրում հայտնաբերված արձանիկների քանակը աննախադեպ է քննվող մշակույթի ողջ տարածությունում:

Թափքեր

Հառիճից գտնված մեծաթիվ կենդանակերպ առարկաների կողքին հայտնի են ընդամենը սայլերի թափքերի ինը օրինակներ: Սրանք 2-3 սմ երկարություն և 1-2 սմ բարձրություն ունեցող քառակուսի կամ ուղղանկյուն առարկաներ են, որոնց մի մասի վրա՝ թափքի երկու կողմերում, երբեմն կարելի է տեսնել անցքեր, որոնք, ամենայն հավանականությամբ, կենդանակերպ արձանիկների կցումից (իմա՝ լծելուց) հետո վերածվել են սայլի մոդելի: Ըստ Թ. Խաչատրյանի՝ այս առարկաներից մեկը գտնվել է անիվներին ամրացված վիճակում, իսկ մյուսները՝ առանձին (Նկ. 3, 4ա): Քանի որ հուշարձանի տարածքում գտնվել են նաև հսկայական քանակությամբ անիվների մոդելներ, ենթադրվում է, որ սրանք նույնպես եղել են ամբողջական սայլերի մոդելներ (Նկ. 5): Չնայած որ լծված սայլերի օրինակներ հանդիպում են նաև ժայռապատկերներում [4, էջ 143: 1, Աղ. 2-5], բայց նմանատիպ մոդելներ առկա են տարածաշրջանի հնագիտական հնավայրերից մի քանիսում: Այսպես՝ սայլերի առաջին մոդելները հայտնի են մ.թ.ա IV հազարամյակում՝ Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Եվրոպայի և Միջին Ասիայի մի շարք հնավայրերում [10, 13, 26, 30] (Նկ. 5 դ-զ): Տարածաշրջանում Հառիճի սայլերի մոդելների համաժամանակյա մեկ մոդել հայտնի է Բադանիից (Վրաստան) (Նկ. 5ա). այն մոտ 4 սմ երկարությամբ կավե առարկա է, որի 3 կողմերից արված են անցքեր, ունի սոնի՝ 2 կողմերից անիվները ամրացնելու նպատակով և մեկ անցք դիմացից՝ առեղն ամրացնելու համար: Առարկայի թափքի հատվածում արված են յոթ այլ անցքեր՝ թափքին սայլի տեսք տալու համար [24, էջ 123]: Մ.թ.ա. III հազարամյակով թվագրվող ևս 2 նմանատիպ սայլի մոդել են հայտնաբերված Արսլանթեփեում (Թուրքիա) [13, էջ 88] և Հարապպայում (Պակիստան) [10, էջ 231] (Նկ. 4բ, 5բ): Սրանք նույնպես երկանիվ սայլի մոդելներ են՝ թափքի վրա արված անցքերով: Իրենց տեղում գտնված երկու սայլի մոդելի օրինակ է հայտնի Թուրքմենստանի Ալթին Թեփե հուշարձանի №5 դամբանից: Սրանք նույնպես 3-5 սմ երկարություն ունեցող նույնանման առարկաներ են՝ մեկի դեպքում՝ կրկին վրան

անցքերով (Նկ. 5գ)։ Թափքի և անիվների յոթ այլ օրինակներ նույնպես կան գտնված այս դամբանի տարբեր շերտերից [17, էջ 301]։

Մ.թ.ա III հազարամյակի երկրորդ կեսով թվագրվող երկանիվ սայլի կավե մոդել է հայտնի նաև հարավարևմտյան Թուրքմենստանի Նամազգա հուշարձանից (Նկ. 5զ)։ Այն ավելի կլորավուն և բարձր թափքով իր է։ Հետաքրքրական է նաև, որ համաժամանակյա հուշարձաններում, օրինակ՝ Ուլուք Թեփեում և Ալթին Թեփեում հայտնվում են նաև ուղտի կամ ձիերի ոճավորված տեսքով սայլերի մոդելներ [30, էջ 294]։

Մ.թ.ա. III հազարամյակի վերջի որոշ հուշարձաններում սայլերի պատկերներ հանդիպում են կավե և արծաթե անոթների պատկերագրության մեջ։ Այսպես՝ մեկ կավե քրեղան է պեղվել հարավարևելյան Իրանի հուշարձաններից մեկում, որի վրա հստակ պատկերված է որսորդության տեսարան, և մարդը, որ կանգնած երկանիվ սայլի վրա, նիզակով փորձում է խոցել փախչող այծերին։ Աֆղանստանի տարածքից նույնպես կա գտնված մի արծաթյա բաժակ, որի վրա հստակ կարելի է տեսնել երկանիվ և քառանիվ սայլերի լծված ցլերի պատկերներ և մերկ տղամարդիկ, որոնք քայլում են նույն ուղղությամբ [17, էջեր 289-300]։

Հին Մերձավոր Արևելքում դիտարկվող այս ընդհանուր պատկերին զուգահեռ՝ Հայաստանի և Հարավային Կովկասի [1, 3, 7, 37, 39] միջին բրոնզիդարյան (մ.թ.ա. 2500–1600 թթ.) Բեդենյան և Թռեղք–վանաձորյան մշակույթների դամբանային համալիրներում նույնպես հայտնաբերվել են անվավոր փոխադրամիջոցների մնացորդներ, որոնցից ամենավաղ օրինակը թվագրվում է մ.թ.ա. 2440–2270 թթ. (Անանաուրի, երրորդ Մեծ կուրգան) [21, էջ 27]։ Միջինբրոնզիդարում՝ խոշոր եղջերավոր անասուններով լծված քառանիվ սայլեր, որոնք դամբաններում դրվել են զենքերի և ոսկուց ու այլ թանկարժեք մետաղներից պատրաստված զարդերի հետ միասին, հայտնի են Հայաստանի և Վրաստանի մի շարք դամբանադաշտերից։ Նման գտածոներ փաստագրվել են Մայիսյանի՝ №7 (Հայաստան), Թռեղք/Զեյանի՝ №1, Սադախլո՝ №4, Ցնորի՝ №1 և №2, Բեդենի՝ №5, №8 և №10, Բերիկլդեեբիի №1 (Վրաստան) դամբանաբլուրներում, ինչպես նաև մի շարք այլ դամբանադաշտերում [23, 34, 36, 40]։

Հայաստանում՝ Լճաշենում, Լոռի Բերդում և Վրաստանում՝ Բերիկլդեեբիում հայտնաբերել են թե՛ քառանիվ, թե՛ երկանիվ սայլեր՝ լծված խոշոր եղջերավոր անասուններով, որ թվագրվում են ուշբրոնզիդարով (մ.թ.ա. 1500–1300 թթ.) [3, 7, 36]։ Եթե միջին բրոնզիդարում Հայաստանում և Հարավային Կովկասում կիրառվում էին բացառապես քառանիվ փոխադրամիջոցներ, ապա ուշբրոնզիդարում հայտնվում են խոշոր եղջերավոր անասուններով քաշվող երկանիվ սայլերը և ճաղավոր անիվներով մարտակառքերը, որոնք աստիճանաբար փոխարինում են ավելի հին ձևերին [40, 41]։ Ինչպես Հին Մերձավոր Արևելքում, այնպես էլ Հայաստանում և Հարավային Կովկասում թաղման ծեսերում անվավոր փոխադրամիջոցների կիրառությունը վկայում է սոցիալական բարդացման խորացման և առանձնաշնորհյալ անհատների կամ ընտանիքների առկայության մասին, որոնք օժտված էին իշխանությամբ և իրենց համայնքներում իրականացնում էին ռազմական, տնտեսական, քրմական և վարչական գործառույթներ։

Ինչ վերաբերում է անվավոր փոխադրամիջոցների մոդելներին, ապա կավե սայլերի մոդելներին զուգահեռ՝ մ.թ.ա. III–II հազարամյակներում Հարավկենտրոնական Անատոլիայում, Լևանտում և Հայկական լեռնաշխարհում դիտվում է նաև բրոնզից և պղնձից պատրաստված օրինակներ։ Բրոնզե սայլերի մոդելներ փաստագրվել են Հյուսիսային Միջագետքում և Հարավկենտրոնական Փոքր Ասիայում [8, 9, 14]։

Մետաղական փոխադրամիջոցների մոդելները մինչ այժմ պեղումներով հայտնաբերվել են սահմանափակ թվով հուշարձաններից՝ մասնավորապես՝ Թել Ագրաբի Շարայի տաճարից (քվադրիգա՝ մարդակերպ արձանիկով), ինչպես նաև Աճեմիյուք հուշարձանի Սարըքայա պալատից՝ բրոնզից պատրաստված, իրական չափային համամասնություններին համապատասխանող (ռեալիստական մասշտաբով) մոդել (ասորեստանյան առնտրական գաղութների ժամանակաշրջան, մ.թ.ա. XIX–XVIII դդ.), որը բնութագրվել է որպես ձիերով լծված մարտակառք։ Հավանական է, որ տվյալ առարկան կիրառվել է ծիսական արարողությունների ընթացքում կամ ծառայել է որպես աստվածությունների «տեղափոխող» մարտակառքի մոդել [19, էջ 20]։ Ավելին՝ ևս երեք մետաղական սայլերի մոդելներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. III–II հազարամյակների սահմանագծին, հայտնի են Աբամոր հույուքից (Թուրքիա). դրանք ծագում են ապօրինի պեղումներից՝ բնակատեղիի հարևանությամբ գտնվող դամբանադաշտում [18]։

ՔՆՆԱՐԿՈՒՄ. Նման սայլերի մոդելների ծագումը դեռևս մ.թ.ա IV հազարամյակից հետազոտողներին մի շարք քննարկումների առիթ է տվել, քանի որ անվավոր փոխադրամիջոցների գոյությունը՝ որպես տեղափոխության եղանակ, նույնպես ոչ միանշանակ է։ Գ. Չայլդը, իր աշխատանքներում անդրադառնալով այս թեմային, դեռևս 1950-60-ականներին տեսակետ է հայտնել, որ անվավոր փոխադրամիջոցների նախահայրենիքը կարող էր լինել Հյուսիսային Միջագետքի և Հարավային Կովկասի միջև ընկած տարածքը, որից էլ հետագայում դրանք տարածվել են և հասել Կովկասի վաղբրոնզիդարյան բնակատեղիներ [11, էջեր 174-176։ 12, էջ 141]։

Սակայն հարց է, թե արդյո՞ք դեռևս վաղ բրոնզի դարում այս փոխադրամիջոցները այդքան գործածելի են եղել։ Ըստ Ֆ. Բուրմայստերի՝ սայլերը հիմնականում կա՛մ կարճ տարածություններ անցնելու համար էին, կա՛մ՝ ինչ-որ առարկաներ/բերք տեղափոխելու և անվտանգ չէին, նամանավանդ, Հարավային Կովկասի նման լեռնային շրջաններում. բարձր բուսականության պայմաններում դրանք չէին կարող օգտագործվել, հատկապես երկանիվ սայլերը, որոնց կառավարելը նույնպես դժվար էր [10, էջեր 234-236]։ Ըստ մեկ այլ հետազոտության, վաղբրոնզիդարում խոշոր եղջերավոր անասունների միայն 5 % է օգտագործվել որպես քաշող ուժ, իսկ միջին բրոնզում արդեն հայտնվում են ավելի մեծ չափի կենդանիների ոսկորներ, որ միգուցե օգտագործվել են այդ նպատակով [31, էջ 249]։

Այս ամենի հետ մեկտեղ՝ հարց է առաջանում, թե ինչու են Հառիճի և այլ համաժամանակյա բնակատեղիներում հայտնվում հարյուրների հասնող անիվների և թափքերի մոդելների օրինակներ։ Հատկանշական է, որ անվավոր փոխադրամիջոցները հայտնվել են հատկապես տնտեսապես զարգացած հասարակություններում, որտեղ բնակչության տեղաշարժերը, տնտեսական կապերն անհրաժեշտություն էին, սակայն

դեռևս հարց է, թե արդյոք դրանք ի սկզբանե օգտագործվել են որպես փոխադրամիջոց, թե կրել են ավելի շատ խորհրդանշական բնույթ։

Հետագայում՝ մ.թ.ա. III հազարամյակի վերջ - II հազարամյակում տարածաշրջանի մի շարք հուշարձաններում հայտնվում են արդեն բրոնզից պատրաստված սայլերի մոդելներ՝ լծված հիմնականում խոշոր եղջերավոր կենդանիներով, որոնք սակայն հայտնվում են թաղման ծեսի միջավայրում, ինչը մի փոքր հեշտացնում է դրանց գործառույթի քննարկումը և տալիս դրանց ակնհայտ ծիսական նշանակություն՝ ցուցադրելով թաղվածի սոցիալական դիրքը և կարևորությունը [3, 7, 38, 39]։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հառիճի վաղբրոնզիդարյան շերտերից հայտնաբերված կենդանակերպ արձանիկները, սայլերի թափքերի և անիվների բազմազան մոդելները բացառիկ տեղ են զբաղեցնում Հայաստանի և Հարավային Կովկասի հնագիտական մշակույթներում։ Անիվների հարյուրավոր օրինակների, 330 կենդանակերպ արձանիկների և ինը սայլերի թափքերի համատեղ գտնվելը վկայում է, որ Հառիճը յուրահատուկ համալիր է, որը հնարավորություն է տալիս ոչ միայն վերլուծելու Կուր-արաքսյան մշակույթի առօրյա-տնտեսական գործառույթները, այլև բացահայտելու դրանց խորհրդանշական դերը։ Հատկանշական է, որ թեև սայլի իրական կիրառման գործառույթը Հայաստանի և Հարավային Կովկասի լեռնային պայմաններում մնում է վիճելի, մոդելների զանգվածային տարածվածությունը վկայում է դրանց ունեցած բազմաշերտ նշանակության մասին։ Դրանք, բացի գործնական նշանակությունից, կարող էին լինել նաև սոցիալական լանդշաֆտում դիրքի կամ համայնքային ինքնության խորհրդանիշներ, ինչպես նաև ծիսական արարողությունների կարևոր բաղադրիչներ։

Այսպիսով, Հառիճի հնագիտական նյութերը, հատկապես կենդանակերպ արձանիկների և սայլերի թափքերի և անիվների մոդելների բացառիկ հավաքածուն նոր լույս են սփռում Կուր-արաքսյան մշակույթի հոգևոր և նյութական աշխարհընկալման վրա՝ ընդգծելով Հարավային Կովկասի վաղբրոնզիդարյան համայնքների դերը տարածաշրջանային տեխնոլոգիական և գաղափարական փոխազդեցությունների համատեքստում։

Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի (N22-YSSS-037) շրջանակում։ Աշխատանքը պատրաստելու ընթացքում ցուցաբերած աջակցության համար հոդվածի հեղինակները շնորհակալություն են հայտնում Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դ. Պողոսյանին, գլխավոր ֆոնդապահ Ս. Հովսեփյանին, հնագիտության բաժնի աշխատակիցներ Լ. Խաչատրյանին, Ա. Պողոսյանին և լուսանկարիչ Վ. Հակոբյանին։

Նկար 1

Նկար 2

Նկար 3

ա. բ.

Նկար 4



ա. բ. դ. ե. գ. զ.

Նկար 5

Նկարների ցանկ

Նկար 1- Անիվի մոդելներ Հառիճի վաղբրոնզիդարյան բնակատեղիից (ՀՊԹ 2621, 2622 հավաքածուներ, լուսանկարները՝ Վ. Հակոբյան)

Նկար 2-Կենդանակերպ արձանիկներ Հառիճի վաղբրոնզիդարյան բնակատեղիից: (ՀՊԹ 2432, 2621, 2622 հավաքածուներ, լուսանկարները՝ Վ. Հակոբյան)

Նկար 3-Սայլի մոդելների կառուցվածքի թանգարանային վերակազմություններ՝ լծված կենդանիների արձանիկներով Հառիճի վաղբրոնզիդարյան բնակատեղիից (ՀՊԹ 2432, 2621, 2622 հավաքածուներ, լուսանկարները՝ Վ. Հակոբյան, առարկաների վերակազմությունը՝ Դ. Պետրոսյան)

Նկար 4- ա. սայլի մոդել Հառիճի վաղբրոնզիդարյան բնակատեղիից (ՀՊԹ 2432 հավաքածու), բ. սայլի մոդել Արսլան Թեփեից (Frangipane 1993)

Նկար 5- սայլի մոդելների օրինակներ Հարավային Կովկասից և Միջին Ասիայից (Burmeister 2010, Teufer 2021):

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ավետիսյան Պ.** *Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV–IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների)*: Գիտական զեկուցում: Երևան: 2014: 92 էջ:
2. **Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ.** *Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների ճարտարապետությունը վաղ բրոնզի դարում (մ.թ.ա IV հազարամյակի կեսից մինչև III հազարամյակի 3-րդ քառորդ)*: Հայկական ճարտարապետության պատմություն: Հատոր I, Գիտություն: Երևան: 33-68 էջեր:
3. **Դևեջյան Ս.** *Լոռի Բերդ III: ուշ բրոնզեդարյան դամբարաններ*: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ.: Երևան: 2022: 392 էջ:
4. **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.** *Սյունիքի ժայռապատկերները:* Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ: 1970: 395 էջ:
5. **Պետրոսյան Լ.** *Լճաշենի դամբանադաշտը (պարբերացում, ժամանակագրում)*: Հայաստանի հնագիտական հուշարձաններ. № 22, Գիտություն: Երևան: 2018. 416 էջ:
6. **Սարիբեկյան Մ.** *Խտաղաքարեր, արժույթի կամ հաշվարկի միջոցներ. Հառիճի Կուր-արաքսյան կավե առարկաների գործառույթի մասին*: Լրաբեր հասարակական գիտությունների: №3(675): Գիտություն: Երևան: 2025: 203-214 էջեր:
7. **Վարդանյան Բ.** *Լճաշենի ամրոցն ու դամբարանադաշտը (ըստ ՀՊԹ նյութերի)*:Երևան: ՀՊԹ: 2023: 304 էջ:
8. **Bollweg, J.** *Vorderasiatische Wagentypen: im Spiegel der Terracottaplastik bis zur Altbabylonischen Zeit*. Zurich. University of Zurich. 1999. 217p..
9. **Bondár, M.** *Prehistoric wagon models in the Carpathian basin (3500-1500 BC).* Budapest. Archaeolingua. 2012. 143 p..
10. **Burmeister, S**. *Transport im 3. Jahrtausend vor Christus. Waren die Wagen ein geeignetes Transportmittel im Überlandverkehr?* // Von Majkop bis Trialeti, Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4-2 Jt V.v Chr. 2010. 223–37pp..
11. **Childe, G.** *The First Waggons and Carts from the Tigris to the Severn* // The Proceedings of the Prehistoric Society. 1951. Vol. 17(2). 177–194 pp..
12. **Childe, G.** *Man Makes Himself*. New York: New American Library. 1936. 191 p..
13. **Frangipane, M.** *Arslantepe-Melid-Malatya, Arslantepe, Hierapolis, Iasos, Kyme* // Scavi archaeology Italiani in Turchia. 1993. 30–103 pp..
14. **Frankfort, H.** *More Sculpture from the Diyala Region*. Chicago. 1943. 260 p..
15. **Hansen, S.** *Bilder vom Menschen der Steinzeit*. Berlin. Philipp von Zabern. 2007. 593p..
16. **Hansen, S.** *Aspects of Bronze Age Art* // The Bronze Age Art: proceedings of international symposium April 15-19, 2013, Stralsund, Germany. Novosibirsk, Berlin: Ministry of Education and Science of The Russian Federation, Novosibirsk National Research State University Siberian Branch of Russian Academy of Sciences. 2015. 141– 158 pp..
17. **Kircho, L**. *Cultural transmissions and the formation of the Silk Road directions in the Central Asia in the second half of the 4th-the beginning of the 2th mill. BC* // Der Kaukasus zwischen Osteuropa und Vorderem Orient in der Bronze- und Eisenzeit: Dialog der Kulturen, Kultur des Dialoges Internationale Fachtagung für die Archäologie des Kaukasus und Humboldt-Kolleg (5-8 Oktober 2015, Sankt Petersburg). 2020. 281–310 pp..
18. **Kulakoğlu, F.** *Recently discovered bronze wagon models from Şanliurfa Southeastern Anatoloia* // Anadolu (Anatolia). 2003. Vol. 24. 63–77 pp..
19. **Liebowitz, H.** *Terracotta Figurines and Model Vehicles*. Malibu. 1988. 112 p..
20. **Littauer M., Crouwel J.** *Early metal models of wagons from the Levant* // Levant. 1973. Vol. 5. 111-125 pp.
21. **Makharadze, Z**. *Ananauri Big Kurgan №3* // Ananauri Big Kurgan №3. 2016. 27–72 pp..
22. **Makharadze, Z**. *Der Großkurgan Nr.3 von Ananauri* // Gold & Wein: Georgiens älteste Schätye. 2018.182-189 pp..
23. **Mansfeld, G.** *Die 'Königsgräber' von Alaca Höyük und ihre Beziehungen nach Kaukasien* // Archäologische Mitteilungen aus Iran und Tura n 2001. Vol. 33.19–61 pp..
24. **Mirtskhulava, G**. *Problems of the Kura-Araxes Culture*. Tbilisi: Artlines Ltd.,; 2011. 305 p..
25. **Piggott, S.** *The earliest wheeled vehicles and the Caucasian evidence* // Proceedings of the Prehistoric Society. 1963. Vol. 34. 266-318 pp..
26. **Sagona, A.** *agons and Carts of the Trans-Caucasus*//Essays in Honour of M. Taner Tarhan 2013. 277–298 pp..

27. **Saribekyan M.** *Anthropomorphic and Zoomorphic Clay Statuettes of the Kura-Araxes Tradition: Case from the Settlement Harich, Armenia* // Praehistorische Zeitschrift. 2026. Vol. 1. In press.
28. **Saribekyan, M.** *Zoomorphic clay figurines from the Early Bronze Age settlement of Harich* // AJNES. 2022. Vol. 16(1–2). 378–390 pp..
29. **Schmidt, K.** *Norşuntepe: Kleinfunde II – Artefakte aus Felsgestein, Knochen, Ton, Metall und Glas* // Archaeologia Euphratica II. 2002. 205p..
30. **Teufer, M.** *Der Streitwagen:eine "indo-iranische'' Erfindung? Zum Problem der Verbindung von Sprachwissenchaft und Archäologie* // Archäologische Mitteilungen aus Iran und Turan. 2012. Vol. 44. 271–312 pp..
31. **Uerpmann M. Uerpmann HP**. *Zug-und Lasttiere zwischen Majkop und Trialeti* // Von Majkop bis Trialeti, Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4-2 Jt V.v Chr. 2010. 237–251 pp..
32. **Özdemir A, Kılınç Z, Demir E**, *Erken tunç çağı'nda Murat Höyük.* İstanbul. Ege Yayınları. 2021. 258 p.
33. **Антонова Е.** *Антропоморфная скульптура древних земледельцев Передней и Средней Азии*. Москва: Изд-во "Наука". 1977. 151 с..
34. **Арещян Г.** *Раскопки в Маисяне.* Археологические открытия 1984 (АО 1984), 1986, 427–428 сс..
35. **Бадалян Р., Овсепян С., Хачатрян Л**. *Шенгавит: каталог археологических материалов из коллекций музея истории Армении.* Ереван: Изд-во "Музей Истории Армении". 2015. 245 с..
36. **Дедабришвили С**. *Курганы Алазанской долины.* Труды Кахетской археологической экспедиции II.Тбилиси: Изд-во "Мецниереба". 1979. 70 с..
37. **Есаян С**. *Скульптура Древней Армении*. Ереван: Изд-во "Ан Арм ССР". 1980. 70 с..
38. **Кушнарева К, Чубинишвили Т.** *Древние культуры Южного Кавказа (V-III тыс. до н.э).* Ленинград:
39. **Куфтин Б.** *Археологические раскопки в Триалети. I.* Тбилиси: Изд-во "АН Грузинской ССР".1941.490 с..
40. **Мнацаканян А.** *Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан*,// Советская Археология 2. 1960. 139-152 сс..
41. **Петросян Л.** *Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н. э.).* Ереван: АН Армянской ССР. 1989. 181с..
42. **Хачатрян Т.** *Древняя культура Ширака.* Ереван: Изд.-во "ЕУ". 1975. 278с..

R e f e r e n c e s

1. **Avetisyan, P.** The Armenian Highland in the 24th–9th centuries BCE (dynamics of socio-cultural transformations based on archaeological data) [*Haykakan lernaashkharhy m.t.a. XXIV–IX darerum (sotsial-mshakutayin dzewapokhumneri dinamikan`yst hnagitakan tvyalneri)*]. Scientific report. Yerevan, 2014. 92 p. (in Armenian)
2. **Areshyan, G. , Ghafadaryan, K.** The architecture of the Armenian Highlands and adjacent regions in the Early Bronze Age (from the mid IV millennium BC to the third quarter of the III millennium BC), [*Haykakan lernashkhari yev harakic shrjanneri chartarapetutyunə vagh bronzi barum (m.t.a IV hazaramyakic minchev III hazaramyaki errord qarord)*]. History of Armenian Architecture. Vol. I. Yerevan. Gitutyun. 1996. 33-68pp.. (in Armenian)
3. **Devejyan, S.** Lori Berd III: Late Bronze age burials, *[Ush bronzedaryan dambaranner*]. Institute of Archaeology and Ethnography NAS RA publ. Yerevan. 2022. 392p. (in Armenian)
4. **Karakhanyan, G. Safyan, P.** The petroglyphs of Syuniq, [*Syuniqi ghayrapatkernery*]. Yerevan. Armenian AS, SSR. 1970. 395 p. (in Armenian)
5. **Petrosyan, L.** The Lchashen cemetery (periodization, chronology) [*Lchasheni dambanadashtə (parberatsum, zhamanakagrum)*]. Arcaheological monuments of Armenia.(22).Yerevan. Gitutyun. 2018. 416 p. (in Armenian)
6. **Saribekyan, M.** Playing stones, currency or calculation sources: On the Function of the Kura-Araxes clay objects from Harich [*Khaghaqarer, arghuyti kam hashvarki mijocner: Harichi Kur-Araksyan kave ararkaneri gortsaruyti masin*]. Herald of social sciences. Vol №3(675). Yerevan. Gitutyun. 2025. pp. 203-214.
7. **Vardanyan B.** Lchashen fortress and graveyard (according to the materials of the HMA), *Lchasheni amrots'n u dambanadashtə (yst HPT' nyut'eri)*].Yerevan. HMA. 2023. 304 p..
8. **– 31. (Տե՛ս հայերեն գրականության ցանկում)**

32. **Özdemir A, Kılınç Z, Demir E** *Erken tunç çağı'nda Murat Höyük*. İstanbul. Ege Yayınları. 2021. 258 p. (in Turkish)
33. **Antonova, E.** *Anthropomorphic sculpture of ancient farmers of Western and Middle Asia*, ''Nauka''. Moscow,1977. 151 p. (in Russian)
34. **Areshyan, G.** Excavations in Maisyan [*Raskopki v Maisyane*]. Archaeological Discoveries 1984 (AD 1984). 1986. pp. 427–428.(in Russian)
35. **Badalyan, R. Hovsepyan, S. Khachatryan** L. Shengavit: Catalog of the archaeological materials from the collections of the History Museum of Armenia [*Shengavit: Katalog arkheologicheskikh materialoviz kolekcii Muzeya Istorii Armenii*] Yerevan. History Museum of Armenia. 2015. 245p..(in Russian)
36. **Dedabrishvili, S.** Kurgans of the Alazani Valley [*Kurgany Alazaňskoy doliny*]. Proceedings of the Kakheti Archaeological Expedition. Vol. II. Tbilisi. 1979. 70p..(in Russian)
37. **Yesayan, S.** Sculpture of Ancient Armenia [*Skulptura Drevney Armenii*]. Yerevan. Armenian AS, SSR. 70p.. (in Russian)
38. **Kushnaryova, K. Chubinishvili, T.** Ancient culture of the South Caucasus (V-III BC) [*Drevnyaya kultura Severnovo Kavkaza (V-III tis. do.n.e*]. Leningrad. ''Nauka''. 1970. 197p..(in Russian)
39. **Kuftin, B.** Archaeological excavations in Trialeti [*Arkheologicheskiye raskopki v Trialeti. I*]. Vol. I. Tbilisi. Georgian AS, SSR 1941. 490p.. (in Russian)
40. **Mnacakanyan H.** Ancient carts from kurgans of the bronze age on the shore of the lake Sevan [*Drevnie pavozki iz kurganov bronzovovo veka na pobereghie oz. Sevan*]. Soviet Archeology 2. 1960. pp. 139-152. (in Russian).
41. **Petrosyan L**. Excavations of the keti and Voskehask sites (III-I BC) [*Raskopki pamyatnikov Keti i Voskehaska (III-I tis. do. n. e)]*Yerevan. Armenian AS, SSR. 1989. 181p.. (in Russian)
42. **Khachatryan T.** Ancient culture of Shirak [*Drevnyaya kultura Shiraka*]. Yerevan. YU.1975.278p.. (in Russian)

Ընդունվել է / Received on: **25. 02. 2026**
Գրախոսվել է / Reviewed on: **10. 04. 2026**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **15. 05. 2026**

Տեղեկություններ հեղինակների մասին

Մարիամ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ mariamgsaribekyan@gmail.com, https://orcid.org/0000-0002-0698-7446

Mariam SARIBEKYAN: Junior researcher, Institute of Archaeology and Ethnography of NAS, Department of Early Archaeology, Yerevan, RA,
e-mail: mariamgsaribekyan@gmail.com, https://orcid.org/0000-0002-0698-7446

Բենիկ Վարդանի ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ գիտաշխատող, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ,
էլ. հասցե՝ vbenik@yahoo.com, https://orcid.org/0000-0003-2623-6575

Benik Vardan VARDANYAN: Researcher, Shirak Center of Armenological Studies, of NAS, Gyumri, RA.
e-mail: vbenik@yahoo.com, https://orcid.org/0000-0003-2623-6575